ԷՋԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIX—XX ԴԴ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՂՈԼ* — Ցարական կառավարության ժամանակ սաթխացիները համարվում էին պետական գյուղացիներ։ Նրանք ունեին վարելահողեր, արոտավայրեր, խոտհարքներ և մարգագետիններ։ Վարելահողերից օգտվում էին համայնական կարգով՝ մի քանի տարին մեկ դրանք վերաբաժանելով տնտեսությունների միջև, հաշվի առնելով ընտանիքների անձանց քանակը. արոտավայրերից՝ ընդհանուր կարգով, իսկ խոտհարքներից ու մարգագետիններից՝ ղոլ կամ խումբ կազմելով։ Գեղջավադը, որ կոչվում էր յուզբաշի (հարյուրապետ-թուրք.), հուլիսի սկզբներին, այսինքն՝ երբ մոտենում էին խոտհնձի օրերը, հրավիրում էր գյուղացիների ժողով և որոշում. նախ՝ խոշոր եղջերավոր անասունների զլխաքանակը, հաշվելով չորս մանր եղջերավորները մեկ խոշորին համարժեք, ապա ղոլերի թիվը։ Ամբողջ գյուղում կազմվում էր 20 ղոլ, ընդգրկելով ամեն մեկում 24, իսկ եթե անասունները քիչ էին՝ 30 տնտեսություն։ Անասնազուրկ գյուղացիները, ցանկության դեպքում, կարող էին մասնակցել ղոլին և ստանալ իրենց բաժին խոտը, իսկ եթե չմասնակցեին, չէին ստանա։ Հնձած խոտը բաժանվում էր մասնակիցների միջև։

Ղոլերը կազմվում էին ոչ թե բնակիչների ընտրությամբ, այլ ըստ թաղերի։ Նրանց անդամները կոչվում էին քաղվորներ, իսկ ղեկավարները, որոնք ընտրվում էին հարգված ու հեղինակավոր մարդկանցից, ղոլբաշիներ (ավագներ)։ Ղոլբաշիներ կարող էին ամեն տարի ընտրվել նույն մարդիկ, բայց կարող էին ընտրվել նաև այլ անձինք։ Նրանք, հավաքվելով, խոտհարքներն ու մարգագետինները բաժանում էին մասերի, այնպես, որ դրանք ունենային մոտավորապես հավասար որակ։ Հողակտորներն իրարից առանձնացվում էին քարերով, բնական նշաններով կամ փոքր-ինչ հնձելով, որ կոչվում էր «դալաբա խփել»։

Ղոլբաշիները հետևում էին կարգ ու կանոնին, հավաքում էին հարկերն ու տուրքերը և տալիս գեղջավագին, իսկ սա՝ պետությանը։ Նրանք չունեին իրավական արտոնություններ, ինչպես ասում են, առաջիններն էին հավասարների մեջ։ Ղոլերը կոչվում էին ղոլբաշիների անուններով։ Տնտեսությունը որքան շատ անասուն ուներ, այնքան շատ հնձվոր էր տալիս ղոլին։ Սովորաբար 8—10 խոշոր եղջերավոր անասուն ունեցող տնտեսությունը տրամադրում էր մեկ հնձվոր։ Եթե նրա հնձվորների թիվը շատ էր, իսկ անասունների զլխաքանակը քիչ, իրավունք չուներ մեծաթիվ հնձվորներ ուղարկել ղոլ։ Գյուղում քիչ չեն եղել այն տնտեսությունները, որոնք կարող էին երկուսից ավելի կամ պակաս հնձվորներ տրամադրել ղոլին, բայց կային նաև այնպիսիները որոնք չէին կարող տալ գոնե մեկը։ Սրանք անասնազուրկ կամ քիչ անասուն ունեցող տնտեսություններն էին։ Ընդհանրապես ղոլին կարող էին մասնակցել միայն այն տնտեսությունները, որոնք ունեին 7—10 գլխից ոչ պակաս անասուն։ Ում տանից ինչքան քաղվոր, այնքան էլ փոցխվոր էր մասնակցում ղոլին։ Լինում էին դեպքեր, երբ գյուղացիները ղոլի համար մշակ էին վար-

---

* «Ղոլ» հասկացության բացատրությունը հեղինակը լսել է իր հորից՝ Սարգիս Կարապետի Համբարյանից և մասամբ նրա համագյուղացիներից՝ Վրաստանի Բողդանովկայի շրջանի Սաթխա գյուղի տարեց մարդկանցից։ Հոդվածը շարադրվում է ըստ այդ տեղեկությունների։

1 Սաթխայում մարգագետիններն ընկած են գետափերին (կոչվում են թուրքերեն բառով ադա-կղզի, գործածվում է հայերենի հոգնակիով՝ աղաներ), իսկ խոտհարքները՝ սարերի լանջերին ու ստորոտներին։

ձում, վճարելով օրական 1—1,20 ռուբլի։ Հնձած խոտի բաժանումը կատարվում էր հետևյալ կերպ. բաղվորներն ու փոցխվորները, այն հավաքելով, դնում էին բարդոցներ, որտեղ գյուղում կոչվում էին եղներ, աշխատելով այնպես անել, որ գրանք ունենային հավասար մեծություն և լինեին այնքան, որքան հնձվորների թիվն էր։ Ապա բաժանում էին վիճակահանությամբ և տուն բերում։ Ղոլին մասնակցած գյուղացին աշխատանքները դեռ չավարտված կարող էր հեռանալ, բայց կստանար այնքան խոտ, որքան հնձել էր։ Սակայն մախտին, այսինքն՝ խոտհարքների համար պետությանը տրվող հարկը, որը սահմանվում էր ըստ շնչի և յուրաքանչյուր ընտանիքից հավաքվում էր 8—11 ռուբլու չափով, պարտավոր էր լրիվ վճարել։

Ղոլի աշխատանքները տևում էին մոտ երկու շաբաթ։ Քաղվորներն ու փոցխվորները գնում էին դաշտ վաղ առավոտյան և վերադառնում երեկոյան։ Քիչ էր պատահում, որ նրանք գիշերևին դաշտում։

Ղոլը ավանդական բնույթ ուներ. խոտհարքներից օգտվելու այդ եղանակը գործածվել էր անցյալում, և 1830 թ. Էրզրումի վիլայեթից գաղթականները բերել էին իրենց հետ։ Դրա մասին վկայում է նաև նրա թուրքերեն անվանումը (շատ հնարավոր է, որ հայերն ունեցել են իրենց անվանումը, բայց հանգամանքների բերումով թողել են իրենցը և գործածել թուրքերենը)։ Ղոլը տարածված էր ոչ միայն Սաթխայում, այլև Ջավախքի բազմաթիվ գյուղերում։

Սաթխացիների հողն անբավարար էր։ Այդ պատճառով էլ նրանք հարկադրված էին վարձակալել լրացուցիչ տարածություններ։ Եվ վարձակալում էին կամ իշխան Կոբուլովի կամ Գորելովկայի դուխոբորների հողերը, վճարելով ըստ պայմանավորվածության։ Կոբուլովին, օրինակ, սաթխացիները տարեկան տալիս էին 9000 ռուբլի (4000-ը՝ գարնանը, իսկ 5000-ը՝ աշնանը) և օգտագործում նրա տարածությունների մի մասը՝ որպես արոտավայր, իսկ մյուսը՝ որպես խոտհարք։ Այդ խոտհարքը հնձելու համար նրանք նույնպես կազմում էին ղոլեր՝ ճիշտ այնպես, ինչպես իրենց համայնական խոտհարքները հնձելիս։

Վարձակալած խոտհարքները բաժանվում էին մասերի, իսկ այդ մասերը վիճակահանությամբ տրվում էին առանձին տնտեսությունների, հաշվի առնելով նրանց անասունների գլխաքանակը։ Ով շատ անասուն ուներ, նրան շատ հողամաս էր տրվում, և նա էլ վարձակալական շատ գումար էր վճարում։ Այս դեպքում վիճակահանությամբ բաժանում էին ոչ թե բարդոցները, այլ քաղելատեղերը։ Երկու դեպքում էլ հավաքած խոտի մեծ մասը ընկնում էր ունևորների ձեռքը։

Ուշագրավ են նաև Հարևան Սպասովկա և Գորելովկա գյուղերի դուխոբորների խոտհարքների ու մարգագետինների օգտագործման եղանակները։ Սաթխացիները նրանց լավ գիտեին։ Երկար տարիներ եղել են դուխոբորների հետ բարիդրացիական հարաբերությունների մեջ։ 1918 թ. գարնանը, երբ երիտթուրքական հորդաները կոտորել ու քշել են Ջավախքի հայերին, «ֆրանկներին» (իմա՛ կաթոլիկ հայերին) ու դուխոբորներին թողել են համարյա անվնաս։ Երբ թշնամին հետ է քաշվել, սաթխացիները վերադարձել են ու իրենց տները տեսել թալանված և ավերված։ Թալանողները եղել են երիտթուրքերի զորքի հետևից եկող Աղբաբու (Ամասիայի) թուրքերը։ Սաթխացիներն ստեղծել են նոր տնտեսություն՝ վարձվելով գերազանցապես դուխոբորների մոտ և կատարելով երկրագործական զանազան աշխատանքներ։ Մի քանի տարում ռուս հարևանները նրանց այնքան են օգնել ուտելիքով, հագուստով, անասուններով ու գյուղատնտեսական գործիքներով, որ կարողացել են տնտեսապես ոտքի կանգնել։

Ղոլը գոյություն է ունեցել նաև դուխոբորների մեջ, բայց այլ անունով ու հատկանիշներով։ Գորելովկայում այն կոչվել է դեսյատկա և ընդգրկել է 40 մարդ։ Սովորաբար, ամեն մի գերդաստան կազմում էր մի դեսյատկա։ Օրինակ՝ Ջուբկովները համախմբվել են մի, Ստրելկովները՝ մի այլ դեսյատկայում։ Նրանցից յուրաքանչյուրն ուներ 40 անդամ։ Այն դեպքում, երբ ըն-

տանիքի անդամների թիվը քիչ էր 40-ից, նրան միանում էր մի այլ ընտանիք։ Շատ էր պատահում, որ դեսյատական ունենա ոչ թե 1 կամ 2, այլ ավելի՝ մինչև 10 ընտանիք։ Համախմբվում էին սովորաբար հարևանները, տրամադրելով այնքան քաղվոր, որքան ունեին։ Նրանք կարող էին վարձել նաև բատրակներ։ Դուխոբորների դեսյատականները նույնպես կազմվում էին խոտհնձի նախօրյակին, ունենալով իրենց ավազները, որոնք խոտհարքները վիճակահանությամբ բաժանում էին դեսյատականների ու ընտանիքների միջև և կատարում ղոլբաշիների մյուս ֆունկցիաները։ Եթե հայերի զոլը կազմվում էր ըստ անասունների գլխաքանակի, ապա դուխոբորների դեսյատական՝ ըստ ընտանիքների երկու սեռերի անդամների թվաքանակի։ Հավաքած խոտը բաժանվում էր ըստ կատարած աշխատանքի։ Բերքի մեծ մասը ստանում էին ունևորները։ Դուխոբորները չէին հավանում հայերի զոլին, այն համարելով «грутовая-чертовая» («չափազանց մեծ» կամ «խիստ մեծաքանակ»)։

Ավելորդ չենք համարում հիշատակել նաև հետևյալ փաստը. սաթխացիներից ոմանք մինչև 1917 թ. հեղաշրջումը վարձվում էին ունևոր գուխոբորների մոտ։ Թե ինչպիսին էր նրանց դրությունը, կարելի է դատել Գրիգորյան Մկրտչի (ծնված Սաթխայում, 1889 թ.) պատմածից։ Նրա հայրը հարուստ չէր, բայց աղքատ էլ չէր, ուներ 1 զույգ եզ, 2 կով, 10 ոչխար։ Մկրտիչը 15 տարեկան հասակից աշխատել է Սպասովկայի հարուստներից մեկի տնտեսությունում, որպես հոտաղ, տարեկան ստանալով 25 ռուբլի, ապա Գորելովկայում՝ նույն տիպի տնտեսությունում, ամիսը 3 ռուբլի վճարով։ Երկու տեղում էլ սնվել է տերերի հաշվին։ Երբ դարձել է 19 տարեկան, Գորելովկայում, նրան վարձել է 12 հոգուց բաղկացած ընտանիք, որն ուներ 60 խոշոր և 250 մանր եղջերավոր անասուն։ Տերը խոստացել է Մկրտչին տալ տարեկան 60 ռուբլի, պայմանով, որ կատարի տան բոլոր աշխատանքները։ Այդ տեսակետից նրա դրությունը ծանր է եղել, մանավանդ, որ տերն ուրիշ բատրակ չի վարձել։ Մկրտիչը բանել է վաղ առավոտից մինչև ուշ երեկո, ինչպես ասում են, առանց քուն ու դադարի։ Բայց տերը լավ աշխատեցրել է, լավ էլ վճարել։ Աշխատավարձի մի մասը վճարել է փողով, իսկ մյուսը՝ բնամթերքով։ Դրանցից զատ, Մկրտչին տվել է նաև 2 արջառ։ Մկրտիչը Գորելովկայում վարձվել է նաև սեզոնային աշխատանքներում, մասնավորապես քաղոցին, և ստացել օրական 1,20—1,50 ռուբլի կամ շաբաթը մեկ ոչխարի։ Աշխատավարձի մի մասը բնամթերքով վճարելը եղել է բնատնտեսության առկայության արտահայտությունը։ Բայց, այդուհանդերձ, Մկրտչին վճարել են բավական բարձր, մի բան, որ Արևելյան Հայաստանում 1909—1911 թթ. քիչ էր պատահում[2]։ Բատրակի աշխատավարձը սովորաբար բարձր էր այնտեղ, որտեղ աշխատուժի մեծ կարիք կար։

Ինչևէ, այս նյութերը կարող են օգտակար լինել ոչ միայն Ջավախքի, այլև Բարձր Հայքի անցյալի հողային հարաբերությունների ուսումնասիրությունների համար, քանի որ Ջավախքի հայերը եկել են Էրզրումի վիլայեթից 1830 թ., բերելով իրենց հետ այնտեղի ընտանեկան ու արտադրական սովորությունները։

ԿՇԼԱԿՈՒԹՅՈՒՆ—Արևմտյան Հայաստանում XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին գյուղացիության, հատկապես հայ գյուղացիության, մի մասը շահագործվում էր ղշլազության կամ կշլակության եղանակով (թուրք. ղշլաղ կամ կըշլակ-ձմեռանոց)։ Դրա էությունն այն էր, որ աղաներից ոմանք գյուղացիներին ձմռանը պահելու էին տալիս միայն իրենց անասունները, իսկ մյուսները նրանց հարկադրում էին պահել թե՛ իրենց անասուններին և թե՛ ցեղակիցքոչվորներին ու սրանց անասուններին։ Գ. Սրվանձտյանցը, Բաֆֆին և Գ. Տերկարապետյանը արժեքավոր տեղեկություններ են տալիս այդ մասին[3]։ Շա-

---

2 Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Դ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 273։

3 Տե՛ս Արծվի Վասպուրական, 1862—1863, № 3. էջ 73, Բաֆֆի, Երկեր, հ. 4, Երևան, 1963, էջ 309—310, Ազատամարտ, 1909. № 47, օգոստոսի 17։

հագործման կշլակության եղանակը գործադրում էին բացառապես կիսաքոչվոր քրդերն իրենց ցեղապետերի կամ տոհմապետերի գլխավորությամբ։ Նրանք այն գործադրում էին գերազանցապես հայ, իսկ որոշ դեպքերում նաև նստակյաց քուրդ գյուղացիների նկատմամբ[4]։ Կշլակությունը գյուղացիության շահագործման սոսկալի ու դաժան ճորտատիրական ձևերից էր։ Այն տարածված էր հիմնականում Աղբակում, Մուշում, Վարգոյում, Խնուսում, Բուլանըխում և Մանազկերտում։

Բայց վերոհիշյալ հեղինակները լռում են այն մասին, թե ով էր հողի փաստացի տերը. քուրդ աղա՞ն, թե՞ նրա վրա նստած, սակայն աղայի իշխանության տակ ընկած գյուղացիները։ Կարո՞ղ էին այդ գյուղացիները, առանց աղայի թույլտվության, հեռանալ գյուղից։

Նրանք լռում են նաև այն մասին, թե ինչպես էին բաշխվում քոչվոր-քրդերը նստակյացների տների վրա։ Այդ հարցերի պատասխանը իմանում ենք Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղի բնակիչ Արշակ Սիրեկանի Վիրաբյանի՝ 1974 թ. գրառումից, որը պահվում է մեզ մոտ։ Նա հաղորդում է, որ իր մեծ պապը՝ Թովմասը, որ եկել է Վանի էյալեթի Մանազկերտ գավառի Բաղնոց գյուղից՝ 1830 թ., պատմել է իրեն, թե իրենց գյուղի հողի փաստացի տերը եղել է Հուսե կամ Հուսեին փաշան։ Հայերը միայն բնակվել են նրա մոտ։ Աղայի կարգադրությամբ, հայերը պետք է պահեին նրա քրդերին ու սրանց անասուններին աշնանից մինչև գարուն։ Քուրդ յուրաքանչյուր ընտանիք իր անասուններով ամեն տարի հաստատվում էր նույն հայի տանը, ուր եղել էր անցյալում։ Փոփոխություն կարող էր լինել միայն այն ժամանակ, եթե նրանցից մեկն այս կամ այն պատճառով այլևս չէր հայտնվում։ Հուսե փաշան երբևէ չի բաժանել իր ցեղակիցներին իր տիրապետության տակ գտնվող նստակյաց քրդերի վրա։ Բացի քրդերին պահելուց, հայը պետք է վճարեր նաև պետությանը իր հավաքած բերքի 7-ից մեկը։ Առանց աղայի թույլտվության, գյուղացիները չէին կարող հեռանալ գյուղից կամ տեղափոխվել մի այլ տեղ։

Մենք չգիտենք, թե կշլակությունը երբ է հաստատվել Արևմտյան Հայաստանում, բայց հայտնի է, որ վերացվել է 1915 թ., հայերի ցեղասպանության հետևանքով։

СТРАНИЦЫ ИСТОРИИ ЗЕМЕЛЬНЫХ ОТНОШЕНИЙ В АРМЕНИИ В XIX—XX ВВ.

А. С. АМБАРЯН

Резюме

В селении Сатха Ахалкалакского уезда Тифлисской губернии для пользования покосами крестьяне создавали кол (т. е. отряд, группу). Этот способ пользования покосами существовал и в других селениях уезда. Видимо, он был завезен сюда предками крестьян—выходцев из Западной Армении (Эрзерумский вилайет). Изучение кола в какой-то мере поможет составить представление о земельных отношениях в Западной Армении в начале XIX в. и ранее.

Известно, что часть крестьянства в Западной Армении эксплуатировалась курдскими родоначальниками в форме кышлакства (т. е. зимовья). Право владения землями, заселенными крестьянами, оставалось за этими родоначальниками. Последние могли запретить им переселиться в другие места. Таким образом, кышлакство являлось одной из форм крепостничества.

4 Տե՛ս Мела Махмуд Баязеди. Нравы и обычаи курдов, М., 1963, с. 52.